Հայք ասացին՝ դուք դաւաճանութեամբ յառաջագոյն պատրաստեալ գնիւթ խարդախութեան ձերոյ՝ գինիք այժմ ընդդէմ մեր գրկել զմեզ 'ի Ս. Տեղեաց, սակայն 'ի հարիւրաւոր ամաց հետէ բնակիմք 'ի վանս Ս. Յակոբայ՝ և ժառանգեմք զայլ սեփհականեալ տեղիս՝ զորս Ջանայք խարէյութեամբ յափշտակել. և ո՞վ արդեօք վկայեսցէ թէ տեղիքն այնոքիկ անկեալ իցեն 'ի ձեռս Յունաց. թէպէտ և երբեմն անիրաւութեամբ բռնաբարեցիք՝ այլ լոյս ճշմարտութեան եւ իրաւունքն արդարութեան փութով խորտակեաց զբռնութիւնս ձեր, և ժառանգութիւնն մեր վերստին դարձաւ առ մեզ։ Դատաւորք ասեն, Արդ ըստ վճռոյ մեծի դէնպետին, եթէ ոք թողեալ իցէ զժառանգութիւն իւր իբր ամս 30, յետ այնորիկ ոչ կարէ տիրել նմա. թող զի Հայք որ հարուստ ամաց հետէ բնակին անդ 'ի տեղիս իւրեանց, թէ և չիցէ սեփհական ինքեանց, սակայն եւ այնպէս չէ հնար ումեք հանել զնոսա անտի։ Հաւանեալ ընդ այս Ատենին՝ ասացին, վանք Ս. Յակոբայ սեփհական է ազգին Հայոց՝ եւ եղիցի։ Գժտմնեալ Յունաց 'ի բանից աստի տրտմեցան յոյժ, փակեցաւ Ատեանն։ Եւ արձակեալ անտի Երեսփոխանացն Հայոց եկին պատմեցին բազմութեան, որք սպասէին 'ի Հասան Փաշա խան։ Ապա ընտրեցին զՋերեզեան Գրիգոր և զԲերէստեճի Մանուէլ դեգերիլ յԱրքունի դիւանս և որոնել զարձանագրութիւնս հրովարտակացն Հայոց։

Նիստ Երրորդ, (19 Օգոստոսի)։

Եկին դարձեալ Հայք և Յոյնք 'ի սահմանեալ տեղին և հանդիսացան յատենի Դատաւորաց. ընթերցաւ դպիրն զառաջին ատենագրութիւնն։ Յայսմ Նստի Դատաւորք 'ի նուրբ քննութեան մտին վասն ժառանգութեանց ուխտատեղեաց և կանթեղացն Հայոց, զորս մի առ մի հարցանէին ցնոսա և ստուգեալ եւս 'ի Յունաց արձանագրէին, բայց Յոյնք զոմանս ճշմարտութեամբ խոստովանէին և զոմանս ոչ. մինչեւ տաղտկանալ դատաւորաց ընդ յամառ մաքառումն նոցին։ Այլ իբրեւ եկին 'ի քննութիւն վանաց Ս. Յակոբայ՝ պնդէին Յոյնք թէ 'ի վարձու տուեալ եմք զայն